

ՍՈՒՐՄԱՆՈՒԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Սուրմալու գաւառ կամ ըստ տեղացիների Սըհաթալ-փոռ, սա այն հարթութիւնն է, որ Արաքսի աջ ափի երկարութեամբ ձգւում է Ախուրեանի խառնարանից սկսուած մինչև երկու Մասիսների ոտքը Բօռօլան կոչուած տեղը, ուր Արաքսի սահանքաւոր ջրերը ահաւոր պտոյաներ կազմելով խլացուցիչ աղմուկ են հանում—հաւանական պատճառ Արաքսի այդ մասի Բօռօլան (գոռացող) կոչուելուն: Արաքսի այդ երկարութիւնը աննշան կիսաշրջանով պատում է Սուրմալուի հիւսիսային կողմը. Սուրմալուի մնացած 3 կողմերը եզերուած են Բարթողեան լեռների երկար, ալիքանման շրջթալով, որի սկզբում արևելեան կողմում վսեմ հպարտութեամբ փառապանծ և ալեգարգ գագաթը ամպերի մէջ թաղած, ցցուած է Մեծ-Մասիսը և վերջում, արևմտեան կողմից ուղղաձիգ տնկուած է բրգանման Բեօր-օղլու սարը կամ Կողբայ գագաթը:

Այս ոչ այնքան ընդարձակ տարածութեան վրայ խառն ի խուռն ցրուած գիւղերում տպւում են հայեր, շիա և սիւննի սլաւոսիկներ, միւսուլման (սիւննի) և եզիզի քիւրդեր: Վերջիններս բռնել են լեռների բարձրալանդակները առանց բացառութեան. հարթութեան վրայ—արանում—ոչ մի քրդի գիւղ չկայ միւսուլման կամ եզիզի: Ազգաբնակութեան մնացած մասը բնակուած է հարթութեան վրայ և շարուած Արաքսի արգաւանդ ափերի մօտ, բացի մի քանի հայ ու թուրք գիւղերից, որոնք գտնուում են լեռներում քրդերի հետ միասին:

Հայերը զետեղուած են 22 գիւղերում, մեծ մասը բնիկներ են և փոքրամասնութիւնը գաղթականներ: Ժամանակը թէև կարողացել է շատ գիւղերում տեղացիների և եկուորների բնորոշ առանձնախտկութիւններից շատերը ջնջել անհետացնել, կամ փոխանակել նորերով, այնպէս որ յաճախ դժուար է լինում որոշել բնիկը եկուոր գաղթականից, բայց և այնպէս շատերի նոյն իսկ ամբողջ գիւղերի բնիկ կամ գաղթական լինելն ապացուցւում է բարբառի, տարազի, սովորութիւնների, բնաւորութեան դժերի յաճախ խիստ աչքի բնկնող զանազանութեամբ: Գաղթականները զանազան ժամանակներում եկել են զանազան կողմերից. համարեա իւրաքանչիւր պատերազմից յետոյ կամ Պարսկաստանից կամ Տաճկաստանից հարիւրաւոր գաղթականներ են սահմանն անցել և լցուել Սուրմալուի գաւառը: Ամբողջ Իգգիրը, մօտիկ Իգգիրմալան և Ալիզամարու գիւղերը Պարսկաստանի գաղթականներ են Խոյ և Սալմաստ գաւառներից: Խալֆալու, Գիւլլիջալ, Մօլլաղամար և Աբասգեօլ գիւղերի բնակիչները Տաճկաստանի բնակիչներ են, էլ չեմ խօսում ուրիշների մասին, որոնք աւելի կամ պակաս չափով ցրուած են այս ու այն գիւղում: Սուրմալուի իսկական, հաստատուած բնիկները կողբեցիք են, բլուրցիք և ակոռեցիք: Կողբեցուց բարբառը, սովորութիւնները, տարազը տարբեր են մնացած գիւղերի հայերից: Ակոռին կործանուել է Մասսի ստորերկրեայ ցնցումից 1840 թ., իսկ Բլուրն այնքան եկուորներ է բնագունել, որ բոլորովին ձուլուել է:

Սուրմալուն բանաստեղծական երկիր կոչուելուց շատ հեռու է. բնութեան այնպիսի հրաշալիքներ, որոնք ակամալից վառում են մարդու մէջ բանաստեղծական խանդ, ծանօթ չեն սուրմալուեցուն: Այստեղ չկան բնական անտառներ. Բարթողեան լեռների մեծ մասը լերկ քարաժայռերի կուտակութիւն է միայն, չկան վճիտ աղբիւրներ, գեղեցիկ ձոր ու հովիտներ, հարուստ մարգագետիններ—բնական հետեանք անտառների բացակայութեան: Սուրմալուն հարթ հաւասար տարածութիւն է, տեղ-տեղ խոնաւ ճահ-

ճային տափեր, ինչպէս Իգգիբի շրջակայքը, տեղ-տեղ ճահ-ճային եղեգնուտներ, ինչպէս Մասսի ստորոտները և շատ տեղ էլ փռուած են չոր, անպէտք հողերի ահագին սպիտակ տարածութիւն, ուր ոչինչ չի բուսնում բացի բարակ, նուազ չոր խոտը, որ անասուններն էլ չեն ուտում: Իսկ լեռների ստորոտներում անվերջանալի շարքով ձգւում են մանր, անշան բլուրներ, ամալի խանձուած տարածութիւն, որ պղերն է կոչւում. ո՛չ մի աղբիւր, ո՛չ մի վտակ չի ուռաբում այդ ահագին տարածութիւնը. դռեր, խլէզների, թունաւոր զեռուների աշխարհ է դա, օձերի թաղաւորութիւն: Սոսկալի են այդ դռերը մանաւանդ ամառ ժամանակ. բորբոքուած քարերից ամբողջ տարածութիւնը դառնում է որպէս մի հնոց, ճանապարհորդը անէծք թափելով շտապեցնում է իւր ուժասպառ ձիուն, շուտ փախչելու այդ վայրերից, մանաւանդ, որ քրդական աւազակների մշտական բոյնն է սա. զարհուրելի բնակիչներ, զարհուրելի վայրերի...: Եւ այս բոլորի վրայ պէտք է աւելացնել և այն, որ Սուրմալուի հարթութեան վրայ—արանում, ձմեռները խիստ ցրտեր են լինում, իսկ ամառներն անտանելի շոգեր. բնակիչների մէջ այդ ժամանակ ճահճային տենդն անպակաս է: Սուրմալուի գեղեցկութիւնը կազմում են այն փոքր ի շատէ խոտաւէտ և ջրաշատ լեռները, որոնք բաժին են ընկել քիւրդերին և հարթութիւնը հարիւրաւոր ուղղութեամբ ահօսող արուեստական ջրանցքները և դրանցով ոռոգուած հացահատիկների, բամբակի արտերն ու այգիները:

Չնայելով այս բոլորին, Սուրմալուի հայ ազգաբնակչութեան մէջ վաղուց հետէ զարգացած է բանաստեղծութեան և առհասարակ երգի պահանջը և տարիների ընթացքում կազմուել է ժողովրդական անգիր բանահիւսութեան մի խոշոր ժողովածու, որ բերանէ բերան աւանդում է յաջորդ սերունդներին և կրթում, ոգևորում է սրանց: Բանաստեղծական այս ժողովածուի մէջ իւրաքանչիւր գիւղ իւր բաժինն ունի, բացառութիւն են կազմում միայն Իգգիբի, Իգգիբմալայ և Ալիդամարու գիւղերը, ուր իշխում է ստեղ-

Ծագործող ոգու կատարեալ բացակայութիւնը. սրանք երգի և ինքնուրոյն բանաստեղծութեան համար համր են: Մնացած բոլոր գիւղերն՝ առանց խտրութեան երգում են կամ իրանց շարագրած և եղանակած երգերը կամ հարևան գիւղերի ստեղծագործութեան արդիւնքները: Բոլոր գիւղերի մէջ առանձնապէս աչքի է ընկնում Կողբը հրաշալի երգերով, որոնք իսկոյն և եթ տարածւում են գաւառի մնացած գիւղերում: Ժողովրդական բանաստեղծութեան մէջ Կողբի խաղացած այս առաջնակարգ դերը բացատրւում է այդ գիւղի գեղեցիկ դիրքով, բնակիչների դուրեկան բարբառով, որը տարբեր է գաւառի մնացած բնակիչների բարբառից իւր գեղեցկութեամբ և բաւականին մօտ է Աշտարակի բարբառին: Քիչ նշանակութիւն չունի անշուշտ և այն հանգամանքը, որ կողբեցիք անխառն բնիկներ են, գուցէ և երբէք բունաւեր և հալածական եղած չեն. նկատուած երեւոյթ է, այն ժողովուրդը, որ յաճախակի գաղթել է, բազմիցս փոփոխել է իւր վաթանը, գաղարում է երգելուց, այնպէս, ինչպէս բունաւեր եղած թուչունը:

Ժողովրդական բանաստեղծութեան հեղինակներն աշուղներն են և գիւղական աղջիկները, որոնք միշտ վառ են պահում ժողովրդի սէրը դէպի պօէզիան: Մի քանի խօսք առաջինների մասին:

Սուրմալուի իւրաքանչիւր գիւղ իւր աշուղն ունի, կոյր մարդիկ, որոնք որպէս ժողովրդական բանահիւսուութեան հաւատարիմ աւանդապահներ, սրբութեամբ են պահում իրանց յանձնուած աւանդը և այն ծառայեցնում են ժողովրդի սրբազան ոգևորութեան հօւրը վառելու: Նրանք շարագրում և երգում են անցեալից և ներկայից, միայն անպատճառ այն ամէնը, ինչ-որ բարձր է, լուրջէ, վսեմ և գաղափարական հայ ժողովրդի համար: Նրանք երգում են և՛ սէր, և՛ խնդրութիւն, և՛ վիշտ ու տառապանք, բայց դրա հետ միասին իբրև ճշմարիտ զաւակ իւր ծնող ժողովրդի, ապրում են ժամանակի հետ, երգում են նրա ժամանակակից գաղափարները, որոնք ամենից շատ նրանց սրտումն են արձագանք

գտնում և ոչ մէկը չի խուսափում այս կոյր մարդկանց սուր մտքերից:

Ինչպէս որ տարբեր է աշուղների ընդունակութեան չափը, այնպէս էլ տարբեր է նրանց մատուցած ծառայութեան չափը ժողովրդական բանաստեղծութեան գործին: Կան նշանաւոր աշուղ վարպետներ, որոնք իրանց մեծ նախորդների ստեղծագործութիւնները իւրացնելով հանդերձ, իրանք էլ երգում են ժամանակակից ժողովրդական կեանքի նշանաւոր երևոյթները. կան և այնպիսիները, որոնք բաւականանում են միայն աւելի հեղինակաւորների ստեղծագործութիւնները երգելով և ընդհանրացնելով: Ժողովուրդն ամենքին էլ սիրով լսելով հանդերձ, չի մոռանում սակայն իւր առանձին յարգանքի և ուշադրութեան առարկայ դարձնել այն հռչակուած բանաստեղծ աշուղներին, որոնք իրանց տաղանդի ուժով կարողանում են աշուղային շփօլա ստեղծել, որոնք ամենից աւելի ընդունակ են հանդիսանում այդ ժողովրդի սրտի հետ խօսել, նրա վշտերի և ուրախութիւնների թարգման հանդիսանալ: Բազմաթիւ և բազմատեսակ երգեր կան, որոնք այժմ պտտւում են ժողովրդի բերանում և որոնք արդիւնք են այդ աշուղների ստեղծագործող հանճարի. դրանց մէջ պատահում են բանաստեղծութիւններ, որոնք կարող են նշանաւոր եւրոպական բանաստեղծների երկերի հետ մրցել: Ի դէպ է այստեղ լիջել ժողովրդին սիրելի գարձած վշտի մեծ երգիչ Քէշիշ-օղլուն: Լսելով այս նշանաւոր վարպետի բանաստեղծութիւնները, մարդ դժուարանում է հաւատալ, որ սրանք դռնէ դուռ թափառող մի խեղճ, ողորմելի աշուղի շարադրութիւններ են: Վշտի այս աստիճան զօրեղ արտայայտութիւն, առանց որևէ կրթութեան՝ ապշեցուցիչ է և վկայում է Քէշիշ-օղլու հանճարեղ բանաստեղծ լինելուն: Ահա նրա մի քանի երգերը.— ասիսոս, սակայն, որ Քէշիշ-օղլու բոլոր բանաստեղծութիւնները գրուած են մաքուր թուրքերէնով. միայն հայերէն թարգմանութիւնը ես չեմ համարձակուում դնել, որովհետև անկարող եմ անթերի կատարել, ուստի առաջ կը բերեմ իսկականը թուրքերէն և

մօտաւոր ճշտութեամբ դրանց բովանդակութիւնը հայերէն լեզուով:

ՔԷՇԻՇ-ՕՂՆՈՒ ՎԻՇՏԸ

- 1) Վարա վարա քիմայ էղիմ՝ շիքահաթ,
Ահլի թառիք գեարաք քիլայ դարդըմի,
Արթրայ արթրայ օ չարխի ֆալագ,
Դեօն դարդի դարեայայ սէլայ դարդըմի:
- 2) Աղլարամ սըզլարամ էլլարամ ֆիրդան,
Ախար գեօզլարըմսան արու իրդան,
Չունքի բու դիարդայ քուլունմազ դարման,
Դահա նա գեաթիրըմ՝ դիլայ դարդըմի:
- 3) Բիր գին բու ֆալագ քէլըմի քուքեար,
Բիր դամզա չաքըփ սինամի սեօքեար,
Նա քեսրգեարդան, նա նառ, նա մայայ չաքեար,
Դեօթուրուփ վէրսալար ֆիլայ դարդըմի:
- 4) Քէշիշ օղլում էղըր ֆանի դոնիադայ,
Արթի դամ հիջրանըմ՝ հաղդան զիադայ,
Չունքի մանա վէրդըն, է՛յ քարի խուդայ,
Դահա վէրմայ էօզգեայ դուլայ դարդըմի:
- 1) Արդեօք ես որի՞ն գնամ ըողոքեմ,
Հմուտ քփիշկ է պէտք դարդս հասկանայ,
Բաղըը մեծացնելով վիշտ ու ցաւերս,
Դարձրեց ծով ու հեղեղի չափ իմ՝ դարդերս:
- 2) Արտասուում ողբում եմ, անում սուգ շիւան,
Թափում է աչքերիցս արին ու արցունք,
Բանի որ այս աշխարհում չի ճարուի դարման,
Էլ ի՞նչ կարիք ասեմ՝ պատմեմ, դարդերս:

- 3) Գիտե՛ս մի օր թաղո՞ւք մէջքս կը կոտորի,
Սուսեր ձեռք առած կուրծքս կը պատողի,
Ոչ ոնգեղջիւր, ո՛չ նառ¹⁾, ո՛չ մայան²⁾ կը տանի,
Թէկուզ վերցնեն ու տան փղին դարդերս:
- 4) Զէշիշ-օղլին աստա՛ է այս փուշ աշխարհում,
Իմ վշտերը չափ ու սահմանից անցան,
Զանի որ ինձ տուիր ո՛վ Տէր իմ Աստուած,
Էլ ուրիշ ոչոքին մի տուր դարդերս:

ԶԷՇԻՇ-ՕՂԼՈՒ ՍԷՐԸ

- 1) Իւզ մին մէհնաթ ինան ըիր քաղ քասլադ,
Խօրիադ ալի դայդի զիւլըմ ուզուլդի,
Դալի զեօնուլ քեօշըփ ուտոմ էլընա,
Շարայ եալվար մախտան դիլըմ ուզուլդի:
- 2) Գեարդանայ թեօքուլդի սիադըր սաշըն,
Վալլարայ վէրմանամ չին ինան մաշին,
Սան ըիր շահան, ման ըիր զեօգարչին,
Ղայնադննան դայդի, թէլըմ ուզուլդի:
- 3) Զէշիշօղլի ըու իշլարդան նաշիդըր,
Հիջրան իշի դայիլ, էշի աթաշիդըր,
Շնգի ըիլըմ դահրայ ֆալագ իշիդըր,
Համի զիւզալլարդան ալըմ ուզուլդի:
- 1) Հարիւր հազար նեղութիւնով պարտէզ տնկեցի,
Խորթ ձեռք դիպաւ թփին վարդու վայր ընկաւ,
Յուզուած սիրտս ձգում է ինձ Յունաստան,
Սիրո՞ւնու աղերսելով լեզուս թուլացաւ:

¹⁾ Նառ—ուղտի մի տեսակն է, որ շատ ուժեղ է:

²⁾ Նոյնպէս:

- 2) Եթե կողմնորոշված փոփոխություններ են սեւ սեւ մազերը, շատա՛տա՛, չեմ փոխի Ձինաստանի հետ, Դու մի ընդուն, ես մի խղճով լոր, Ծիրանդ դիպաւ փնտուրս թափուցաւ:
- 3) Բէշիշ-օղլին այս գործերից անգետ է, վշտի գործ չէ սա, այլ սիրոյ կրակ, Յետոյ գիտցալ, որ փոփոխ ըսողի խաղ է, Բոլոր գեղունիներից ձեռնթափ եղալ:

Ոչ միայն Սուրմալուկի աշուղները, այլ և իւրաքանչիւր չափահաս սուրմալուկացի աւելի կամ պակաս չափով գիտեն Բէշիշ-օղլու երգերը, լսած են նրա մասին, սիրում, պաշտում են նրան: Կան և բացի նրանից ուրիշ բազմաթիւ աշուղներ, որոնց երգերը խիստ ընդհանրացած են: Աշուղների երգերը ընդհանրապէս լուրջ են և խրատական. դրանք սիրելի են մանաւանդ ժողովրդի այն մասին, որոնք անցել են կեանքի փորձութիւնների բովից, պատկառելի հասակ ունին և աշուղների տխուր երգերի մէջ իրանց տխուր անցեալի յիշողութիւններն են տեսնում:

Շատ բան կարելի է ասել մեր ժողովրդի այս կոյր վարդապետների և նրանց գործունէութեան մասին, հնարաւոր է և դրանց շատ երգերն ու հէքիաթները գրի առնել, բայց որովհետեւ այդ բանը մեր այժմեան նպատակից դուրս է, ուստի թողնելով մի այլ անգամի աւելի ընդարձակ խօսելու դրանց մասին, բաւականանում ենք այս թեթեւ ակնարկով: Անցնենք այժմ ժողովրդական բանաստեղծութեան միւս հեղինակներին — գիւղական աղջիկներին:

Ո՛վ է սուրմալուկացի հայ աղջիկը, որ կարողանում է իւր երգերով հազարաւոր սրտեր թնդացնել, որ իւր մէջ կրում է ժողովրդի ստեղծագործող տաղանդը, որ կարողանում է միշտ վառ պահել ժողովրդական բանաստեղծութեան կայծը իւր պարզ, անպաճույճ, բայց լուզիչ երգերով: Ըստ երևութին մի խեղճ արարած, նահապետական ընտա-

նիքի զաւակ, որ օժտուած է իւր ծնող օջախի բոլոր նախապաշարմունքներով, որոնց ծանրութեան տակ կախում է իւր գլուխը՝ ծածկելու ամօթխած գէմքը, փակում է իւր բերանը իւր սեփական կարծիքը չլայտնելու համար մեծերի առաջ, լարում է իւր բոլոր ուշադրութիւնը, լսողութեան բոլոր ուժը, որ կարողանայ տան բոլոր անդամների հրամանները կայծակի արագութեամբ լսել և կատարել: Նամիշտ լուռ է, իւր իրաւունքի կամ արդարութեան մասին պահանջ լայտնել չգիտէ. նա լուռ է և այն ժամանակ, երբ նրա ամենաքնքոյշ զգացմունքները վիրաւորում են իւր մեծերը, երբ ոտնատակ են տալիս նրա սէրը և ձեռքից բռնած անասունի պէս վաճառում չսիրած երիտասարդին: Աերջին գէպքում նրա լուռութիւնը խորհրդաւոր է. նա հէնց այդ լուռութեան մէջ է շարահիւսում իւր երգերը, որոնց մէջ թափում է իւր սրտում կուտակուած մաղան ու զարույթը, անէծք է թափում բռնաւորների գլխին, նզովք սիրոյ դաւաճաններին, և այն աղջիկը, որ իւր տանը չէր համարձակում գլուխ անգամ բարձրացնել երբ նրան դատապարտում էին նահատակուելու, այդ աղջիկը իւր ընկերուհիների շրջանում, նրանց հետ միացած, շատ անգամ նրանց բերանով թափում է իւր սիրտը կրծոց վիշտն ու դառնութիւնները մելամաղձոտ, վշտոտ երգերով: Ահա նա. մի թաշկինակով գլխի միայն վերի մասը կապած, ծամերի բազմաթիւ հիւսերը լայն, փարթամ թիկունքին ալեծածան, մի հասարակ արխաւուղ, կամ վերնազգեստ հագին և լաճախ ոտաբոբիկ: Նա համարեա միշտ այսպէս է: Դուք նրան կը տեսնէք կուժն ուսին մերձակայ առուակից ջրի գնալիս իւր մի քանի ընկերուհիների հետ, կը տեսնէք նրան ամառն իբրև այգու և բանջարանոցների պահապան, այս ու այն չարգախի կամ քօլիկի կտրանը նստած, կը տեսնէք նրան ամառային սոսկալի ասթին կռացած բամբակի արտի մէջ քաղհան անելիս. կամ թէ կալում, կաման վրայ կանգնած ալրող արևի տակ միանման տաղտուկ շրջաններ կատարելիս հէշանի վրայ, նոյնպէս ալրուած, նոյնպէս լոգնած, որ-

պէս այն զօրդ անասունները, որոնք անգիտակցաբար միևնոյն գծով դանդաղաբայլ ընթացքով տանում և բերում են յետևից կախուած կամը՝ վրայի կենդանի բեռով: Չկայ գիւղական աշխատանք, որին չմասնակցէր սուրմալուեցի աղջիկը և այս բազմազան և յաճախ ծանր տաժանելի աշխատանքների ժամանակ նա երգում է ուրախ, անհոգ, միանգամայն տարուած և մխիթարուած իւր երգով: Այս չարքաշ կեանքի մէջ նա միջոց և հնար է գտնում սիրել, փայփայել իւր սէրը, և երգել նրան յուզիչ արտայայտութիւններով, յուզիչ ձայնով և եղանակով:

Իւրաքանչիւր գիւղում կան մի քանի իսկապէս բանաստեղծ աղջիկներ, բացի ուրիշ բազմաթիւները, որոնք երգում են առաջինների ստեղծագործութիւնները: Այս բանաստեղծ աղջիկները չեն բաւականանում միմիայն իրանց և իրանց ընկերուհիների սէրը երգելով. գիւղական կեանքի մէջ տեղի ունեցած ամեն մի արտասովոր երևոյթ, յուզիչ դէպք, ինչպէս մի ջահիլ ջիւանի սպանութիւնը կամ յանկարծական մահը, երկու սիրողների յանցաւոր կապեր, որոնք խտխտում են նահապետական կեանքի աւանդաբար սրբագործուած սովորութիւնները և վիրաւորում ժողովրդի նուիրական զգացմունքները, և հետևապէս դատապարտելի են գիւղի հասարակական կարծիքով, մի աղջկայ փախուստ իւր սիրածի հետ, մի ուրիշ սիրահարի բռնի ամուսնութիւն, ընդհանուր ժողովրդական ցաւեր, այս բոլորը, բոլորը բանաստեղծ աղջիկների երգերի սիւժետներ են դառնում: Գիւղական աղջիկներից ո՞րն է յօրինում այս ինչ կամ այն ինչ երգը դժուար է որոշել և իրապէս ո՞չ մի երգ առանձնապէս մէկի հեղինակութիւնը չէ. որևէ տեղ, որևէ առթիւ համախմբուած աղջիկներից ընտրեալները—տաղանդաւորները միասին են խմբագրում այս կամ այն երգը: Դժուար է նոյնպէս որոշել, թէ ո՞ր գիւղի շարադրած է, այն աստիճան արագ է տարածուած ամբողջ գաւառում և ընդհանուրի սեպհականութիւն դառնում:

Որչափ տարբեր են գիւղական կեանքի խաղաղ միա-

կերպութիւնը վրդովող դէպքերը, նոյնքան էլ տարբեր են լինում աղջիկների շարահիւսած երգերը և նրանց եղանակները: Անցնենք օրինակներին:

Ելմիածնի գաւառի Ղուրգըղուլի գիւղից Սրբուհի անունով մի 7 տարեկան աղջիկ է անյայտանում իւր քրոջ տանից 1890 թ.: Աղջկայ եղբօր և ազգականների բոլոր ջանքերն ապարդիւն են անցնում խեղճին գտնելու և կարծիք է ընդհանրանում, թէ նա հաւանականաբար խեղդուել է Արաքսում: Անցնում է 3 տարի: Սուրմալում Արաքսից դէպի Իգդիր նոր խճուղի է շինուում, որ տնցնում է Ղարաղօյին թուրք գիւղի մօտով: Հայ բանուորներից մէկը, մի աբարանցի, մտնում է Ղարաղօյին գիւղը հաց խնդրելու. մի թուրքի բակում նրան հաց է տալիս մի 10 տարեկան աղջիկ, ըստ երևոյթին թրքուհի, բայց որքան է լինում հայի զարմանքը, երբ այդ թուրք աղջիկը յանկարծ հայերէն լեզուով դառնում է դէպի այդ հայը և արտասուելով պատմում, որ Ղուրգըղուլեցի է և 3 տարի առաջ թուրքերը Արաքսի ափից գողացան բերին այս գիւղը: Թշուառը յայտնում է իւր բոլոր ազգականների և եղբօր անունը և աղաչում է գնալ իրանց տուն և յայտնել իւր ուր լինելը և այն թէ, թուրքերը մտադիր են նրան շուտով Պարսկաստան անցկացնել վաճառելու: Աբարանցի հայը սրբութեամբ կատարում է խեղճ աղջկայ խնդիրը, փնտրելու են գալիս նրա եղբայրն ու ազգականները, լիշեալ հայի հետ մտնում են յայտնի թուրքի տունը, բայց ի զո՛ւր, որովհետև թուրքերը կանխապէս նախազգուշութիւն են ստանում և աղջիկն անյայտացնում կամ նոյն իսկ երկիւղից սպանում: Եւ այսպէս կորչում է խեղճ Սրբուհին: Այս իրապէս ողբերգական դէպքը յուզում է Սուրմալուի հայ աղջիկներին և նրանք տխուր մեկամաղձոտ եղանակով երգում են տարաբաղդ աղջկայ անցքը. երգի մէջ զայլույթով լցուած նախատինք են թափում «հայ իշխանների» գլխին, որոնք իրանց անհոգութեամբ թոյլ տուին քրիստոնեայ աղջկան գերի մնալ անօրէնների ձեռքին: Ահա այդ երգը. —

Միամիտ նստածի Արագի ափին,
 Անօրէն լամուկը փոեց եւափունջին,
 Ամօ՛թ, հազար ամօ՛թ, հայ իշխաններին,
 Որ Սրբուհուն թողին անօրէններին:

Միամիտ նստածի քոյրիկիս ըաղին,
 Անօրէն լամուկն էլաւ իմ եաղին (թշնամին),
 Ամօ՛թ, հազար ամօ՛թ, հայ իշխաններին,
 Որ Սրբուհուն թողին անօրնի ծնոնի:

Սրբուհու ոնքերն ամենից կամար,
 Աստուած ստեղծեր էր անօրնի համար,
 Ամօ՛թ, հազար մամօ՛թ, հայ իշխաններին,
 Որ Սրբուհուն թորգին անօրնի միջին:

Սրբուհու արցունքն ըարեխօս էլաւ,
 Գիւլլէն տուին Յակոբ ախաօրը չը դիպաւ,
 Ամօ՛թ, հազար ամօ՛թ, հայ իշխաններին,
 Ձեր սուրբ կրօնը խի՞մ տուիք անօրնին:

Ես Սրբուհին եմ դուրդըղուլեցի,
 Ծրեք տարի դարաղօյին մնացի,
 Ախաւերտանքս իմ հաւարին չեկան,
 Ղալբաշի տէրութիւնը գնացի:

Անցեալ 1895 թուին ճանապարհների վրայ աշխատող մի ուսու կանդուկտօր Արաքսի ափին ձուկ բռնելիս, ափը փռւլ գալով ջրի մէջ ընկաւ և խեղդուեց: Ահա նրա երգը.—

Մարքարի գեղ պարքը փօշտ ա,
 Չանգեալ գցելն հանելն հեշտ ա,
 Ծառի տակին եմ՝ քար ու կոշտ ա,
 Աստուած սիրող քաղցր երգէք:

Ծառի տակն եմ, վրէս հով ա,
 Ես ո՞նց դուրս գամ արնծով ա,

Անուշկէն գայ ընծի գովայ,
Աստուած սիրող քաղցր երգէք:

Արազն էկաւ լափին լափին,
Տախտակ ըերին դռուլ շափին,
Դրին ֆուրդունն իգղիք մամփին,
Աստուած սիրէք քաղցր երգէք:

Կանդխտօրի վրի թուրը,
Խեղճ անմեղին խեղտեց ջուրը,
Ռոսաստան տարէք լուրը,
Այնտեղից գան մայրը քոյրը:

Մարգարի գեղ մեծ ստանցի *),
Ընկայ ջուրը խեղտուեցի,
Մարդ չունեմ, որ նստի լացի,
Աստուած սիրող քաղցր երգէք:

Անցեալ 1894 թուին, Բ. գիւղում, Արամ անունով մի
երիտասարդ իւր ազգականուհու այգում շրջելիս անյայտ ձեռ-
քով գնդակահար եղաւ, իսկոյն հետեւեալ երգը կազմուեց. —

Կայնար հօրքուրանց ըաղին,
Գիւլլէն էլաւ քո ետղին,
Ես մայիլի քո խաղին,
Դու կայնար դարին,
Ձէն տուր քո ետրին Արամ ջան:

Կայնար հօրքուրանց մէշին,
Գիւլլէն առաւ քո դօշին,
Ղուրճան ըլիմ քո նաշին,
Բլրցին էկաւ
Գութանը տարաւ Արամ ջան:

*) Փոստային կալարան կալ աշնտեղ.

Գուլթան էր կայնած ըագին,
Պալտոն Արամի հագին,
Կնիկն էւջիլար պսակին,
Կայնար դռանը,
Գիւլլէն կռանը Արամ ջան:

Արամի սեւ շորերը,
Անուշկի սեւ օրերը,
Ծարդ տարան էվջիլարը,
Դու կայնար դարին,
Ձէն տուր քո եարին Արամ ջան:

Անարատ, մաքուր սէրը միշտ մի առանձին պաշտպանութիւն է վայելում ժողովրդական երգերի գեղեցիկ հեղինակների կողմից, և ամէն մի փորձ, որ ուղղուած է լինում բռնի կերպով բաժանելու երկու սիրող սրտեր, արդարացի զայրոյթով լցնում է մեր բանաստեղծուհիների սիրտը. դրանք իրանց երգերում բողոքում են այդպիսի սրբապղծութեան դէմ, յանդիմանում են նոյն իսկ իրենց ծնողներին, բայց և նոյն այդ աղջիկները իրենց զէնքերը դարձնում են դէպի իրենց ընկերուհիները, եթէ սրանք դաւաճան են հանդիսանում, դրժում են տուած խօսքը և սէրը դարձնում վաճառքի առարկայ և շօրը մէկի ճտովն են կախվում: Ահա մի օրինակ.—

Գիւլլիջեցի մի աղջիկ Անօ անունով, խօսք է տալիս տեղացի Ներսէս անունով մի երիտասարդի. բայց երբ վերջինս էջմիածին է գնում աշխատելու, սիրած աղջիկը աչք է ձգում Գայլատույ լճի կապալառուի եղբոր վրայ և նրա հետ փախչում է: Ահա այդ առթիւ կազմուած երգը.—

Ես Անօն եմ Հովէի թոռն եմ,
Հովէի կնգայ ըաղչի ըարն եմ,
Սեւ Ներսէսի ծոցի եարն եմ,
Դամանդարի ախպօր եարն եմ:

Ես Ներսէսն եմ Գիւլլիջեցի,

Էջմիածին հունձ գնացի,
Ալ ըաղտատին ես ընրեցի,
Թառլան Անուն կորցրեցի:

Ջուրն եկաւ վերի սարէն,
Եկաւ թափաւ մախմառ ւարէն,
Անուն էլաւ իր իլղարէն *)
Վրէն թափի եաման եարէն:

Անուն կայնն գեօլի դարին,
Աչքը մացն դամանդարին,
Ե՛րբ կը ըացուի լուսն ու ըարին,
Էթամ հասնեմ Գրիգոր եարին:

Անուն էլաւ կտուրն աշեց,
Գրիգորն էլաւ ըօզ ծին քաշեց,
Տիգրան ախաօրը քարին տունեց,
Ներսէս եարի սիրտը մաշեց:

ԼԷ ԼԷ

1) Ես վերեւէն եկայ, դու դուռը ըացիր,
Ձեռքս տարայ ծոցը, ախ արիւր լացիր,
Եար եար եար եանարամ **),
Վայլահի ալարամ:

2) Ես վերեւէն եկայ թէշի մանելով,
Դէրիէդ ներկած էր Գեանջայ տօրօնով,
Եար եար եար եանարամ

3) Ինչո՞ւ ինձ սիրեցիր, խաղեցիր չառար,

*) Տուած խօսք:

***) Սիրեկան, սիրեկան վտուտեմ եմ,
Աստուած վկայ առնելու եմ:

Մի՞թէ ես քեզի մտ չ'եղայ ընդունակ,
Նար եար եար.

- 4) Նրկինքն ամպել ա գետինը թաց ա,
Սիրունիս կայնել ա էրեսը քաց ա,
Նար եար.
- 5) Ինչո՞ւ ինձ սիրեցիր խաբեցիր չ'առար,
Մի բուռը կրակ գիր սիրտս վառեցար:
- 6) Գոգնոցդ ղուլթնի ա, ափները շալ ա,
Մատներդ քարակ ա մաշինի կար ա,
Ինչո՞ւ ինձ սիրեցիր խաբեցիր չ'առար,
Մի բուռը կրակ գիր սիրտս վառեցար:

Եթէ յուզիչ ողբերգական դէպքերը երգուում են տխուր մեղամաղճոտ եղանակով, դրանց հակառակ կան մի շարք այնպիսի երգեր, որոնց թէ իմաստը և թէ եղանակը յարմարեցրած են ուրախութիւն արտայայտելուն. երգելիս աղջիկները ոտքերի ընդհանուր դոփիւն հանելով՝ պար բռնած թուչում են. այս երգերը գիւղական պարերգներ են: Պարերգերը յաճախ շատ քիչ իմաստ են պարունակում. դրանց հեղինակներն աւելի ուշադրութիւն են դարձնում, որ լանգերը յարմարաւոր լինին. երբեմն նոյն իսկ անհետեւութիւններ են ասում որևէ դուրեկան յանգ յարմարեցնելու համար. այսպիսի դէպքերում բնականաբար երգի իմաստը զոհ է բերուում երաժշտականութեան, այնպէս որ այդպիսի երգերը աւելի շատ եղանակ են, քան որևէ իմաստ. դրանց մէջ աչքի են ընկնում մանաւանդ յաճախակի կրկնութիւնները: Ահա այդպիսի մի պարերգ. —

Հայրիկս զնաց Թիֆլիզու քաղաք,
Ին տղին կ'առնեմ անունը Մաղաք:
Հայրիկս զնաց Էրէւնայ քաղաք,
Ին տղին կ'առնեմ անունը Ղազար:
Մանէթը խուրդեմ, անեմ արասի,

Էն տղին կ'առնեմ, անունն Աղասի:
 Հաքեր եմ ջովդան, կայներ եմ մէյդան,
 Թառ բոյիդ մատաղ նշանլու եար ջան:
 Հաքեր եմ լաստիկ, կայներ եմ սաստիկ,
 Թառ բոյիդ մատաղ նշնլու աղջիկ:
 Հաքեր եմ ալը կայներ եմ կալը,
 Թառ բոյիդ մատաղ նշանլու եարը:
 Էս եանը ուռ ա, էն եանը ուռ ա,
 Կողքեցու հարսի ջիքինը նուռ ա:
 Էս եանը պօւօք, էն եանը պօւօք,
 Սիրել եմ կ'առնեմ, հագինը սապօք:
 Արի Օսան ջան, գնա Օսան ջան,
 Ես քեզի դուրքան սիրելի եար ջան:
 Քւորս աղջկայ անունը Շողօ,
 Էն տղին կ'առնեմ, անունը Եղօ:

Եւ այսպէս շարունակուած է անվերջ: Այս ձևով կազմուած
 երգն այն յարմարութիւնն ունի, որ միջոց է տալիս սիրող
 աղջկան կամ տղային հէնց պարի ժամանակ յանկարծակի
 նման նոր տողեր շարադրել և արտայայտել իւր սրտի ցան-
 կութիւնը սիրած անձի վերաբերմամբ:

ԾԱՂԿԻ ԳՈՎՋԸ

Այ օրուն օրուն ծաղիկ,
 Կարմիր ու թոռուն ծաղիկ,
 Զահիլ աղջիկ եմ կիտես,
 Գամ քեզ գովալու ծաղիկ:

Ծաղիկ ծաղկավանայ եմ,
 Ասլ էրէվանայ եմ,
 Տարին մէ հէտ ես գալըմ,
 Թազայ նուրար խանայ ես:

Ծաղիկ ծաղկածորէն եմ,

Մենձ բաղի խնձորէն եմ,
Քամին տուեց վե քցեց,
Վաթանս մուրերը եմ:

Ժաղիկ ես քո ծառէն,
Թէրբի միջի թառէն եմ,
Տարին մէ հետ ես գալըմ,
Մակեար քո մասխարէն եմ:

Կան մի շարք ժողովրդական բանաստեղծութիւնների առանձին առանձին տներ. դրանց ծագման ժամանակը և տեղը ևս առաւել անյայտ է: Այսքան միայն կարելի է ասել, որ դրանք նույնպէս աղջիկների ստեղծագործութիւններ են, և թէև ուրոյն ուրոյն, իրարից անկախ և զանազան ժամանակներում կազմուած, բայց բոլորի իմաստն էլ միևնոյնն է համարեա, այսինքն գիւղական աղջիկների և երիտասարդների սիրոյ արտայայտութիւններ և սիրալին արկածների նկարագիրներ: Այս երգերի առաջին երկու տողերը շատ անգամ բոլորովին չեն կապուած վերջինների հետ իրենց իմաստով և միմիայն յանգերի նմանութեամբ են համապատասխանում. նկատելի է նույնպէս, որ երգչի միտքը վերջին երկու տողերում է արտայայտուած, բայց և այդ վերջին երկու տողերով էլ կարելի է գիւղական սիրահարների սիրոյ ամբողջ պատմութիւնը հանել. իսկապէս այդ երգերը, չնայելով իրենց ըստ երևութիւն տարբեր իմաստներին, մի ամբողջ վէպ են ներկայացնում, մի վէպ, որ կազմել են զանազան գիւղերում և զանազան ժամանակներում ապրող գիւղացի աղջիկները: Անյուս սիրողը իւր սրտի կրակն է թափել նրա մէջ, բաղաւոր սիրահարը իւր սրտի անհուն բերկրութիւնն է նկարագրել այնտեղ, բռնի անջատուած սիրահարները իրանց անսահման վիշտն ու զառնութիւնն են թափել նրա տողերում և նզովք են կարդացել ասբիբէա (պատճառ եղող) գլխին, սիրոյ նետով խոցուածք երգում է իւր սրտով սիրածի Վամար ունքերը, չչալ աչք կարմիր թշերը: Տեղտեղ աչքի է ընկնում երկու սեռի երիտասարդների մի սիրուն

բանակուիւ ասենք, թէ սիրակուիւ, մի հաճելի մրցութիւն, որով երկու կողմերն էլ աշխատում են իրարից գերազանցել բանաստեղծական ձիրքերով, սուր երգիծաբանութեամբ, որոնց աստառը դարձեալ սէրն է: Սիրային գէպքերի նկարագրութեամբ այնքան հարուստ են այդ բանաստեղծութիւնները, որ շատ անգամ մի նոր սիրային արկած երգելիս, աղջիկները նոր բառեր չեն շարագրում, այլ ուղղակի ընտրում են թրանցից իրանց տեմաին յարմարաւոր տներ, տոչեր, կազմում են մի ամբողջ երգ, միայն տների վերջում աւելացնում են միքանի այնպիսի բառեր, որոնք երգին տալիս են ժամանակակից գոյն:

1. Կանն առայ գացի աղ- Սիրունն եարը քաղցր ա,
քիւր, Գնա հօրը հարցրայ,
- Թասը տուի առայ պաղ ջուր, Որ չը տունց փախցրայ:
Հէր ու մէր աչքերդ կոյր, 7. Ձեմ մունի գետը խոր ա,
Տղին տես աղջիկդ տուր: Բաթան շապիկս նոր ա,
2. Ժոտն էլաւ էրես էրես, Խաբար տարէք իմ մօրը,
Բազրգեան Աստուած սիրես, Ես օլքայ օլքայ կորայ:
Ինչ որ կ'երթաս էրէվան, 8. Ախպէր արածիդ մեռ-
Իմ եարին հետդ ըերես նեմ;
3. Ելն ընցայ էն եանը, Գինուդ կարասիդ մեռնեմ,
Եոր տեսայ Ֆիզան եարը, Ծամփայ էթող շէկ ախպէր,
Տղին տես աղջիկը տուր, Սրտիդ մուրազին մեռնեմ:
Ինչ անեմ անշահ մալը: 9. Ախպէր ունեմ աւչի ա,
4. Բօզ ծիան նալն ինչ Մէջքը քարակ դամչի ա,
անեմ, Ոչ թուր ունի ոչ թվանգ,
Սիրունն եմ խալն ինչ անեմ, Լեզուվը թալանչի ա:
- Սրտով սիրած եարս ըլնի, 10. Ժառի տակը տալդայ ա,
Դունիադայ մալն ինչ անեմ: Բանի կայնիս ֆայդայ ա,
5. Ուռի ես կոանալ մի, Սիրած իրածի չեն տայ,
Մեր դունէն հեռանալ մի, Էս ինչ կանոն դայդայ ա:
- Եար Աստուածդ կը սիրես, 11. Եստեր ես նոան վրայ,
Սիրեր ես մոռանալ մի: Ձինարի ծառի վրայ,
6. Ուռի ծառը պանցր ա, Փինօ ֆասդ դրեր ես,

- Շէկլիկ քեանքուլիդ վրայ, Կ'երեսաս խէտ թփերին,
 12. Ամպեր ա ամպի նման, Էկան քաղեցին տարան,
 Շաքարի դանտի նման, Ժախեցին ազափներին,
 Իմ նանն ինձի մոնց պահեց, 20. Սիրեր եմ ծովաշէնքին,
 Ժալած գիւլքանդի նման, Հաներ եմ աչքը ունքին,
 13. Մեռայ քաղին լալե- Էկար ծովը ջուր խմար,
 լով, Բեաքուլ թափաւ թիկունքին:
 Մի եանից ջուր անելով, 21. Վարդ եմ քաղենարնջի,
 Ժառին եարփաղ չը մնաց, Ա՛յ տղա՛, արի փնջի,
 Դարդիս դարման անելով: Իմ հէր քեզի աղջիկ չի տայ,
 14. Ժիրանի, ծիրան մի Էնքան ման գաս գարնջի
 տուր, (տանջուած):
- Ժղներդ իրար մի տուր, 22. Գնացի ջուրը ջրի,
 Ամեն մէջը մտնելու, Աչքովս տեհայ սիրի,
 Դարդերս իրար մի տուր: Օձի լեղին վեր կալի,
 15. Բահն էր ուսին դրած, Դուշմանիս քալէն դեղի:
 Թավչազն էր ոսկեջրած, 23. Գնացի շայը վլասք,
 Աչքը ունքիդ հովարած, Սապունն էր ոսկեջրած,
 Խիստ էր ոանգը թրած: Ի՛նչ անի հէրն ու մէրը,
 16. Ա՛յ տղա՛ դու աղայիր, Ծակատիս էս էր գրած:
 Չի գիտում քանզաղայիր, 24. Մտիկ արէք էն դա-
 Ուռել մի, պատռուել մի, գին,
 Դու մի ժուլիկ գաղայիր: Պուտ ծաղիկ քողազին,
 17. Ա՛յ տղայ՛, ալին տը- Ի՛նչ ասեմ հօրն ու մօրը,
 դայ՛, Ինձի տուին տուլազին:
- Բեաքուլը դալին տղայ՛, 25. Շատ քաղցըր է սի-
 Ես քե որդե սիրեցի, րածը,
 Հէրանցս կալին տղայ: Չի սաղանում հարուածը,
 18. Սոված քուչէն ման Ինձ սիրունուց հանողը,
 արի, Ուրացե իւր Աստուածը:
 Ես քե մարդ չեմ համարի, 26. Եսա ծովին մնաց,
 Գնա հօրդ պարտքը տուր, Իմ օր ու կեանքս գնաց,
 Եոր արի աղջիկ սիրի: Մեռնելն ինձ համար ոչինչ,
 19. Ժիրան ես ծառի ծէրին, Սիրունիս տրտում մնաց:

27. *) Էն սարը պանցր Հոտ կ'ուզայ մանուշակին,
 սար ա, 34. Ղարսայ ջուրը պա-
 ճակը ժնջիլով քար ա, ղել ա,
 Ես քե որդե սիրեցի, Ղամէն ձեռս տարել ա,
 էշը հանեց աշկեարայ. Էն շէկ քղաւոր տղէն,
 28. Աղջի անունդ էլիսայ, Խեղք ու միտքս տարել ա.
 Գլխիդ կարգինկէն խաս ա. 35. Ժիրանի ծառը խոց ա,
 Թուշը դէս արա պաշեմ, Սիրոսս եարալու խոց ա,
 Գնա՛ քո նանին ասա. Սիրոսս սրտիդ վէջն ըլլի,
 29. Էս գիշեր աստղ լուս ա, Իմանաս դարդը մոնց ա.
 Աստղերը խաղալիս ա, 36. Աղջի անունըդ Մայի,
 Մէլդան ըացէք անց կենամ, Ծակատը ըոլոր շահի,
 Ծաղլու եարս գալիս ա. Թուշը դէս արա պաշեմ,
 30. Տղա ի՛նչ ա իլագդ, Աստուած ախպէրտ պահի.
 Օղով կօճկով քիլագդ, 37. Թաւայ բերէք ձու խա-
 Մի քանալ ըայագ ոջող, շեմ,
 Ծարիդ գցիր կրակը. Ընեմ կտուրն աշեմ,
 31. Զուխտ գովման սար Տէնեմ եարս գալիս ա,
 կը քանի, Իջնեմ չաքմէքը քաշեմ.
 Եէկ աղջիկ հաց կը տանի, 38. Գիւլն եմ փոել ես դա-
 Մէկ քէլայ մէկ կը կայնի, շին,
 Այլ ու իմանս կը տանի. Ի՛նչ եմ անում անտաշին,
 32. Զուխտ ախլըզողը հա- Ես սիրել եմ ես կ'անեմ,
 գել ես, Լէն երես դալամ դաշին.
 Ուզուն ըոյդ կոկել ես, 39. Երկինքէն անցաւ դուռ-
 Որտեղ եարիդ տենալուց, նէն,
 Փասդ պոզիդ թեքելես. Բրդի շինած կուլէն,
 33. Դու նստել ես ոջա- Աղջի շատ շատ մի խօսի,
 գին, Բերանը կծի թուլէն.
 Խեղքը ու միտքդ փէշագին, 40. Օխշարն արել եմ
 Խմել ես նոան գինին, դուզը,

*) 27 թուահամարից մինչև 55 համարը կողբեցու երգած է, և
 այդ մասի բարբառը տարբեր է մնացած մասի բարբառից.

- Ջոկել եմ Ղարազեօզը, Գնացած խելքդ ընրեմ:
 Ելլուող դրկայ նշխեմ, 48. Ծաղացը ման եմ տը-
 Թափ տուր քեաքուլիդ թոզը: ուել,
41. Իմախպէրն սարումն ա, Սիրել եմ ջան եմ տուել,
 Եվոնն զօտկա ծալումն ա, Օխտը տարի սէրուծին,
 Եղբայր ջան շվոնն ածա, Մի օր իլղար եմ տուել:
 Բուրդ Լօռու քարումն ա: 49. Կաքաւը քարի վրէն,
42. Կիրակի էլ պաւս կ'ըլլի՞, Մախմարը երի վրէն,
 Արծթէ էլ թաս կ'ըլլի՞, Մէ ոսկէ հէքալ պտէր,
 Վարդապետ օրթիդ մեռնի, Իմ դարդաշին երի վրէն:
 Սիրածն էլ չը հաս կ'ըլլի՞: 50. Դամբուլի կոթը փթի,
 43. Ժիրանը ծառի ծէրին, Օխտը կով ոնեմ կ'թի,
 Բամին տայ եարփաղներին, Ով որ իմ սիրածն առնի,
 Էկան քաղնցին տարան, Հոգին դժոխքին փթի:
 Ժախնցին ախմախններին: 51. Բարդանը դուռն եմ
 44. Խնձոր ոնիմ կ'ծածա, դրել,
 Ափներումը մխազած ա, Ջէքերս նուռն եմ դրել,
 Ախպէրս ուզեց չը տուի, Մէ ընրան չ'ասիր երօ,
 Ասի եարի դրգած ա: Ելաֆկէդ ծուռն ես դրել:
45. Մեր քաղը էրզէն 52. Ծաղացի դուռը չիման,
 քաղ ա, Ախպօրը չը կայ իման,
 Խնձոր գցեմ կը խաղայ, Բրոշը քաշին տարան,
 Խանին եմ աղջիկ տուել, Մէ պէրան չ'ասաւ եաման:
 Խան դէղի սուլթան աղայ: 53. Գնացի շուրը ջրի,
 46. Աղուէս դարը *) պը- Ոտս ընկաւ օցի լնդի,
 լել ա, Հօրն ու մօրն ինչ ասեմ,
 Երս տակը քնել ա, Խի'ստ տըւուց եթեմ տղի:
 Ձէն տուի ծէնս չ'առաւ, 54. Բաղքի վէշը միկի-
 Էդ ինչ անուշ քնել ա: տան,
47. Դամբուլի քոքը քերեմ, Բօխվի աղջիկն ընծի տան,
 Կաննեմ քեաքուլդ ընրեմ, Իմ անունը Չարնշան,
 Կուտս քցեմ վզովդ, Մատնեքս տամ քե նշան:

*) Աղուէս դար— կողքում մի բլուր է:

55. Բահդ ես ուսդ դրել,
Թովչազը ծուռն ես դրել,
Մէ պէրան չ'ասիր երօ,
Շլաֆկէդ ծուռն ես դրել:
56. Ղուշը վերելէն անցաւ,
Սինին խնծորով լցաւ,
Քուլլուզի եար տուն էկաւ,
Իմ եարը վերել անցաւ:
57. Էրէվան խորամիջին,
Պաղ աղբիւր ձորամիջին,
Էդ քու շամամ ծծերդ,
Կարմիր խնծորայ միջին:
58. Կանաչ արտի քնարը,
Ո՛վ ա տեսն իմ եարը,
Գլուխս դուրբան կ'անեմ,
Առաւօտայ իլդարը:
59. Կայներ ես սարի ճամփէն,
Իշլում ես եարի ճամփէն,
Կը տամ ոսկէ մատանիքը,
Որ դու գաս ջրի ճամփէն:
60. Լորը թուա էս հանդից,
Կոտրաւ շաքեարը դանդից,
Աշող չի, աշող դարձաւ,
Գնացած եարի դարդէն:
61. Ժամի դռան սել քարը,
Բա մի՞նց կ'ըլլի իմ ճարը,
Սիրտս դարդով լցուեր ա,
Ճնոէս թուա իմ եարը:
62. Արազը բուզ ա ըննեմ,
Քեաքուլդ թոզ ա ըննեմ,
Քուրը դուրբան ախաօրը,
Սիրածը թեզ ա ըննեմ:
63. Կողքայ ըրեցին աղը,
Սրտիս քաշեցին դաղը,
Քեզ հետ էնքան չեմ'խօսայ,
Բարով ըլլենք եայլաղը:
64. Զուրն առայ իլայ սարը,
Տեսայ իմ Ֆիդան եարը,
Ֆիդան եարը ինձ տուէք,
Զը քաշեմ ահ ու զարը:
65. Ժամի դուռը մաս մաս քարը,
Ես չեմ' առնի դարի՞ք եարը,
Թելերիս ըրանն օյայ,
Եարս թավաթի սօյ ա:
66. Սեախողի քամին էր,
Սիտակ ծովի գեամին էր,
Որը սիրի քաց թողի,
Էն էլ ընդու համին էր:
67. Սիրած աղջկայ տէրը,
Խօսքն ա տուե հէրը,
Օխտը տարի սիրեցի,
Զը տուեց քեաֆուր մէրը:
68. Զադը եմ' տուե սարին,
Վադայ եմ' կտրե տարին,
Վադայ կտրած տարին տես,
Էդ քէ իլդար եարին տես:
69. Զանքայ հովին կայներ ես,
Մովի եայլուդ փոել ես,
Բարել տուի դու չ'առար,
Մազեար թարգս տուեր ես:
70. Կայներ ես վանքայ հովին,

- Բամին տայ դօշիդ մովին, Իլղար եմ տուն եարին,
 էրնէկ քո ծոց քնողին, Իլղարէդ տօնմիշ ըլնես,
 Մէ ջուխտ շամամ ընտողին: Դիւանէդ թէփայ ըլնես:
71. Աղջի դու սիրուն քան
 ես, 78. Էս առուն ջուր ա է-
 թըմ,
- Ընծի ձեր տունը տանես, Մէ տեսէք ո՛ւր ա էթըմ,
 Գիշերը մտող պահես, Մըհանայ քենին անըմ,
 Առաւօտը դուրս անես: Եար տէնալու ա էթըմ:
72. Անհանգիստ ծիծեռնակ
 ես, 79. Մէ ծառ ոնեմ գի-
 լագի,
- Դու քո ջանին կրակ ես, Գիշերը քնայ երագի,
 Եատ էլ մի հպարտացի, Ես միշտ Աստուած կը կան-
 Մէ ծառայող մշակ ես: չեմ,
73. Մուղնու առուն լողա- Եարս հասնի մուրագի:
 ցայ, 80. Ղամիշ եմ դալխայ մի-
 ջին,
- Գիւլլի եայլու գողացայ, Աքրշում չալխայ միջին,
 Օխտը տարի հիւանդցայ, Ես մէ պումուր եար ոնեմ,
 Եարս էկաւ լաւացայ: Ես մէ կանաչ խիար
74. Մուղնու ջուրը սա- Ուտումաթ խալխայ միջին:
 ոքն ա, 81. Ես մէ կանաչ խիար
 եմ,
- Մուղնի էթողն իմ եարն ա, Բո սրտին ըխտիար եմ,
 Էթայ մուրագն առնի, Որդե կ'եթաս շուտ արի,
 Յետ դառնայ ընծի առնի: Ես քո եարալու եարն եմ:
75. Սիրել եմ սեւ չուխա- 82. Բաղի մէջը վարթ կ'ըլ-
 տը, նի,
- Ես եմ գեալաջու սաւոր, Բաղի շունը սարթ կ'ըլնի,
 Սիրի սիրտս չը կաւա, Աղջիկ դու կամաց խօսա՛,
 Եաչարդան արի քաւոր: Աղջիկ դու կամաց խօսա՛:
76. Բաղչի ետեւը դամիշա, Դալղա տեղին մարդ կ'ըլնի:
 Բաղչէն լիքը եմիշ ա, 83. Սարէն էկաւ ձիւտը,
 Աստուած սիրող մեղ մի դիր, Սաղմոսը ծոցին սաւոր,
 Սրտով սիրածն անուշ ա: Սաղմոսը գիւլ ա դարձե՛,
77. Չաղը եմ տուն սա- Լեզունը ըլրիւլ ա դարձե՛:
 ըին, 84. Ժամի դուրը հինած ա,

- Հինածը հատհըտած ա,
 Կարմիր մովը փոած ա,
 Եարս տւկը քնած ա:
85. Ես մէ պուծուր տուն
 Մէջը ոսկի սուն ունեմ,
 Եան տղայ շատ մի խօսա,
 Բն պէս օխտը շուն ունեմ:
86. Կայներ ես փէտ կը
 Իմ դարդն էլ պըտի քաշես,
 Ինձ սիրեր ես, որ չ'առնես,
 Բո շորերդ չը մաշես:
87. Առուն էկաւ լափ տա-
 Էրկու խնձոր ծափ տալով,
 Հրէն եարս գալիս ա,
 Եէկ քեաքուլը թափ տալով:
88. Կ'ընեմ սարը կը կան-
 Ղարաքուլաղ ծանանչ եմ,
 Ելը գիմս հաաքեմ,
 Ազիզ եարիս տուն քերեմ:
89. Բուչէքը լինքը լինքը,
 Աղջի արա քո միտքը,
 Ձեռով անեմ դէս արի,
 Բեզ տամ ոսկի մատնիքը:
90. Աղջի անունըդ ինչ ա,
 Գլխիդ այլուրը քըռչ ա,
 Սիրում ես լաւ սիրի,
 Էդ պոկօռ տղէն ինչ ա:
91. Տեղը քցեմ փոնթ կը
 Բարծի տակից հոտ կը գայ,
- Իմ եարը հեռու տեղ ա,
 Առանց նրան քուն չի գայ:
 92. Մեր հանդերը ջրով ա,
 Մեր ոէսը թրով ա,
 ունեմ, Դատաւորի մօտ էթայ,
 Խօսքը ոսկէ ջրով ա:
93. Կարմիր քարը տա-
 շած ա,
 Բոյս մէջը քաշած ա,
 տաշես, Ինչ անեմ որ քաշած ա,
 Սիրտս հալ ու մաշած ա:
94. Իմ քաղղաղին ալ կու-
 գեմ,
 Բարակ մէջքիս շալ կ'ուզեմ,
 Որ տունը որ մոնելու,
 Ոսկին շարէ շար կ'ուզեմ:
95. Դարն ընցայ էն կալը-
 Ինչ կ'անեմ դունիի մալը,
 Տղէն տես աղջիկը տուր,
 Թող ըսկի չ'ընի հալը:
96. Սուրք Կարապետ ուխտ
 կ'անեմ,
 Ժամերս ջուխտ ջուխտ կ'ա-
 նեմ,
 Իմանամ ինձ չես առնի,
 Կ'երթամ մօլլին թուրթ կ'ա-
 նեմ:
97. Սէրն ինչ էր, սավղէն
 ինչ էր,
 Ախ եար քո դայդէն ինչ էր,
 Ղալամ դաշ շարմա ունքեր,
 Ձը պաչես Ֆայդէն ինչ էր:
98. Ժառի գլխին սեւ դը-
 շնը,

- Դեռ չի հասել մեր նշեր, Օրը հինգ դան կը գոսի:
- Ախշի հայլին առ իշկայ, 106. Կայնե դուռը դողում ա,
- Ի՞նչ կարմիր ա քո թշեր: Սաղաֆի պէս շողում ա,
99. Իմ եարը քազար քա- Ոչ ջողաքը տալում ա,
- շի, Ինձ էլ ձեռաց թողում ա:
- Չաքմէքը քարակ կաշի, 107. Ախշի իշկա էն դզին,
- Եկաւ դռնուքն անց կացաւ, Հարս ու կեսուր քուրդ կզին;
- Ես ասի քարով մաշի: Սիրած սիրածի շնն տայ,
100. Դէզ եմ դրել հաւան Մեղքը հօր ու մօր վզին:
- չեմ, 108. Առչի իշկա էն դշին,
- Ես իմ գլխին դիւան չեմ, Ոտը դրե վոր փշին,
- Ինձ օխչարամիրթ անէք, Գլօխս դուրքան կ'անեմ,
- Ես էն տղին հաւան չեմ: Չալ աչք կարմիր թշին:
101. Բաղի փանջարէն շու- 109. Կայնել ես կանչում
- շա, էլ չես,
- Բաղի քարն անուշ ա, Բոյիցդ ամանչում էլ չես,
- Ախպէր խաթըրը շը մայ, Էկայ կշտովդ անցկացայ,
- Եարը քեզնից անուշ ա: Բօռ ես ծանաչում էլ չես:
102. Մէ եարունիմ անուշա, 110. Կայներ ես կած կը
- Անուշ ա ալվան շուշա, մանես,
- Քարափումս կայնած էր, Արեզնակի նման ես,
- Ես ասի թառլան դուշա: Իջի ստուց դէն գնա,
103. Բերդի բոլորը ցել ա, Ետտ մարդ գլխից կը հանես:
- Բերդը վարդով լցվել ա, 111. Կուրտիկ ոմեմ դեղին ա,
- Ախպէրն ասաւ քոյր չ'ունեմ, Իմ եարը ձեր գեղին ա,
- Քոյրը դարդով լցվել ա: Եար ընելը շատ հեշտ ա,
104. Տեղ եմ քցել դալամ- Թողնելը շատ քալայ ա:
- քար, 112. Իմ եարը ընձի եար
- Մշի քնողը քալանթար, պիտ էր,
- Ես մէ պուճուր լեղակ եմ, Գօտկումը խիար պիտ էր,
- Քալանթարի տեղակ եմ: Իմ եարի կայնած տեղը,
105. Ինչ որ ասեմ չի լսի, Թոփչինարի ծառ պիտ էր:
- Կայնե դուռը կը մոսի, 113. Եայլուրը հետս եմ քը-
- Գնաց առաւ ախմախին, ցել,

Շէկ եարը միտս եմ քցել,
Ըսօր էրկօր չեմ տեսել,
Կրակը սիրտս եմ քցել:

114. Ա՛ տղա անունդ ի՞նչ ա,
Շան տղա դավէդ ի՞նչ ա,
Կ'երթամ կանոնեմ՝ դժբաշ,
Բօյովդ կտրեմ՝ դումաշ:

115. Կարմիր Մաքին մը-
սացու,
Դեղին մախմառ քիսացու,
Ես քո մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու:

116. Զրի մամիէն ալ կ'ա-
նեմ,
Սպիտակ երես քալ կ'անեմ,
Շան տղա շատ մի հաչա,
Քեզի հալ ու մաշ կ'անեմ:

117. Աղէս մածոն ա մէրե,
Փէսէքին տուն ա բերե,
Անտէր մնա գող կատուն,
Փէսէքի փայն ա կերե:

118. Մէրս արաւ ծածեղ,
Վրէն լցրեց լիքը եղ,

Տեսաւ փեսէն տուն չ'եկաւ,
Կատուն կերաւ փեսի տեղ:

119. Պուժուր ախշի սեւա-
ւոր,

Խալիսի դոներին սաւոր,
Իլի մէրդ կանչում ա,
Ինձ էլ չ'անես մեղաւոր:

120. Ա՛ տղա դու մեր գե-
ղացի,

Օտար տղին դեղեցի,
Ատամներդ մարգարիտ,
Բերանդ եկեղեցի:

121. Քե մեղք չունես ան-
մեղ ես,

Մեր գեղին գեղդի տեղ ես,
Հայի լեզու չես գիղում,
Փէտը ձեռիդ հօտաղ ես:

122. Կարմիր ըլուզ կարեր
եմ,

Դեղին կոճակ շարեր եմ,

Այ տղա՛ քօլ ա խօսաս,

Քեզնից լալը ճարեր եմ:

Ա. Ա հ ա Ր Ո Ն Ե Ա Ն